

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԳՈՆԱՎՈՐԴՆԵՐ. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Արմեն Պետրոսյան

Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ alpehist@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 06.01.2022, գրախոսվել է 10.01.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.3-307

Ներածություն

Ըստ հին հունական արգոնավորդների առասպելի՝ արգոնավորդները լողում են արևելք՝ Կոլխիդա, ոսկե գեղմի հետևից, որն այնտեղ վիշապի հսկողության տակ կախված էր սրբազան կաղնուց: Առասպելն առավել ամբողջական ներկայացված է Ապոլոնիոս Հռոդոսացու «Արգոնավտիկա» պոեմում (մ.թ.ա. III դար), բայց արտացոլված է նաև բազում այլ աղբյուրներում՝ սկսած հունական առաջին տեքստերից մինչև հռոմեական հեղինակներ¹:

Այս առասպելը համահունչ է հին Փոքր Ասիայում ոչխարի գեղմի պաշտամունքին և դրա ծեսին: Այնտեղ գեղմը, որ պահպանվում էր որոշ տաճարներում, նվիրված էր մի շարք աստվածությունների, բայց այն պաշտում էին ոչ միայն որպես աստվածության խորհրդանիշ, այլև որպես հենց աստվածություն²: Ծեսերից մեկի ժամանակ գեղմը կախում էին մշտադալար eia(n) «գեղծի, կենի» ծառի վրա (KUB XVII 10 IV 27–3)³:

Այն երկիրը, ուր նավում են արգոնավորդները, վաղ շրջանի աղբյուրներում կոչվում է Այա (հին հուն. Αἴα, նոր հունարենից տառադարձվում է նաև որպես Էա), որը միայն ուշ շրջանի աղբյուրներում է նույնացվել Կոլքիս/Կոլխիդայի հետ (Այան հանդես է գալիս նաև որպես Փասիս/Ռիոն գետի մոտ գտնվող մի վայրի անուն, իսկ ուշ շրջանի հեղինակների մոտ՝ Կոլխիդայի մայրաքաղաք)⁴: Երկիրը պատկերվում է որպես առասպելական անդրաշխարհ: Արգոնավորդները լողում են դեպի Այա/Կոլխիդա ոսկե գեղմով խոյի

¹ Տե՛ս МНМ 1, 98-100, Грейвс 1992, 429-461, Bremmer 2008, 303-310, առասպելի շարադրանքով, աղբյուրներով և գրականությամբ:

² Ардзинба 1982, 10.

³ Այս առասպելի փոքրասիական կապերի մասին հնդեվրոպական համատեքստում տե՛ս Иванов, Топоров 1974, 34-36, Гамкрелидзе, Иванов 1984, 582, 907-909, Bremmer 2008, 310-320, Топоров 2010, 293-304:

⁴ Lordkipanidze 2001, 4-9, Fowler 2013, 201.

տիրոջ՝ Փրիքսոսի հոգու հետևից (Պինդարոս, Pyth. IV.156-161): Արգոնավորդների գործունեությունը տեղի է ունենում «ոչ թե իրական տարածության [...] այլ մի տեսակ չորրորդ չափման կամ ինչ-որ առասպելաբանական գերտարածության մեջ»⁵, իսկ նրանց «Արգո» նավը համադրելի է տարբեր ժողովուրդների առասպելներում հոգիները անդրաշխարհ տեղափոխող նավի հետ⁶: Ուրեմն, Այա-Կոլխիդյան առասպելաբանական համատեքստում հոգիների կացարանն է, անդրշիրիմյան ինչ-որ աշխարհ: Իսկ ոսկու բացառիկ առատությունը այդ երկրում խոսում է նրա «դրական»՝ դրախտային անդրաշխարհի լինելու մասին:

Երկրի թագավորը Այետեսն է (Αἰήτης, Aietēs)՝ արևի աստծու որդին, որի դստերը՝ կախարդուհի Մեդեային (Μήδεια, Mēdeia) արգոնավորդների առաջնորդ Յասոնն իր հետ տանում է Հունաստան: Հետագայում Մեդեան վերադառնում է և վերականգնում հորը գահի վրա, որը հափշտակել էր Պերսեսը՝ հորեղբայրը: Մեկ այլ տարբերակում սկսում է իշխել Մեդեայի և Յասոնի որդի Մեդոս/Մեդեյոսը (Μήδος/Μήδειος)՝ մեծ արքա, որը նվաճում է Ասիայի մեծ մասը: Այս առասպելի անունները կարող են խորհրդանշել Ասիայի ժողովուրդներին⁷:

Հնդեվրոպական կապեր

«Մահաբհարատա» էպոսում (I.70-88; V.105-119) պատմվում է Յայատի (Yayāti) արքայի պատմությունը, որի՝ երկու կանանցից ունեցած որդիները դառնում են Հնդկաստանի և մի շարք այլ երկրների, այդ թվում՝ հույների և արևմտյան որոշ ժողովուրդների նախահայրեր: Իր աներոջ անեծքի հետևանքով Յայատին դառնում է անզոր ծերուկ, բայց որդիներից մեկը համաձայնում է իր երիտասարդությունը տալ նրան: Նա բարձրանում է երկինք, որտեղ մի քանի դրախտային աշխարհներում ապրում է հազարամյակներ, այնուհետև մի մեղքի պատճառով նետվում երկրի վրա, բայց դստեր և որդիների արժանիքների շնորհիվ նրանք միասին նորից բարձրանում են երկինք:

Հնդեվրոպական առասպելաբանության կարևոր բացահայտումներից մեկը Յայատիի և նրա դուստր Մադիավիի առասպելի համեմատությունն է Էդիսայդի և նրա դուստր Մեդբի իռլանդական առասպելի հետ⁸: Մեդբը իր

⁵ Андреев 1990, 172.

⁶ Fontenrose 1959, 477-487, Moreau 1994, 128-131.

⁷ Այսպես, Մեդոսը՝ Մարաստանի (հուն. Մեդիա) անվանադիրն է, Այան համադրելի է հայ ցեղանվան հետ (հունական ավանդության համաձայն, հայերի նախնին արգոնավորդ էր, տե՛ս ստորև), Յասոնի և Մեդեայի որդու անունով կոչվել է Թեսալիան, Ապսիրոտոսը՝ Այետեսի որդին, ըստ որոշ գիտնականների՝ մարմնավորում է հյուսիսկովկասյան ցեղերին (հմմտ. արխազների apswa ցեղանունը), Պերսեսը համադրելի է պարսիկների, իսկ Փրիքսոսը փոյուգիացիների ցեղանունների հետ, տե՛ս Պետրոսյան 1997, 88:

⁸ Dumézil 1972, 239-390.

երեք եղբայրներից ծնում է մի որդի, գահի արժանավոր թեկնածու: Եղբայրները զոհվում են իրենց հոր դեմ պատերազմում, որից հետո Էդիսայդն արգելում է որդիների թագավորելը արքայի մահից հետո (Մադիավլիի հետ համեմատվում են նաև Մեդբ անունով ուրիշ հերոսուհիներ, որոնք ամուսնանում են տարբեր թագավորների հետ): Այստեղ էլ, ինչպես հնդկական առասպելում, ընդգծվում է թագուհու դերը՝ որպես հոր պաշտպան և օրինական ժառանգ ապահովող (ինչը փոքրասիական կապերի համատեքստում կարելի է համեմատել խեթական տերության մեջ գահաժառանգության կարգի հետ)⁹: Դյումեզիլն ընդգծում է այդ առասպելների կապը հնդեվրոպական առասպելաբանության, այսպես կոչված, «երեք ֆունկցիաների» հետ (տիրակալության/քրմական, ռազմական և համայնական): Այսպես, Մադիավլիի տարբեր արքաներից ունեցած որդիները կապված են այդ գործառույթների հետ, իսկ Մեդբի հիշյալ որդու մարմինը բաժանված էր երեք շերտի (համաձայն երեք գործառույթների), որոնցից յուրաքանչյուրը նման էր իր հորը (միաժամանակ երեք գործառույթների կրողը կարող է մարմնավորել արքայի՝ որպես ամբողջական հերոսի կերպարը):

Յայտսին, որը եղել է տիեզերական տիրակալ, «արքաներից լավագույնը», արքաների և ժողովուրդների նախահայր, հազարամյա երիտասարդության տեր և երկնային դրախտային աշխարհների բնակիչ, համադրելի է անդրաշխարհի թագավորության տիրակալի հետ, իսկ իռլանդական ավանդության մեջ Էդիսայդ է կոչվել նաև անդրաշխարհի աստված Դագդան: Այդ արքաները համեմատելի են Այետեսի՝ անդրաշխարհիկ Այա երկրի արքայի հետ: Համադրելի են նաև Նրանց դուստրերի՝ Մադիավլիի, Մեդբի և Մեդեայի կերպարները: Այսպես, Մեդեան իր որդու հետ վերահաստատում է հորը գահին, իսկ հետո թագավորում է Նրա որդին: Նա տիրապետում էր մարդկանց երիտասարդացնելու կարողությանը (տարբեր աղբյուրների համաձայն՝ վերադարձրել է Յասունի հոր երիտասարդությունը) և ամուսնացած է եղել տարբեր արքաների հետ (Յասուն, Այգևս/Էգևս, ասիական մի արքա և Աքիլլես): Նա սպանում է իր եղբայր Ապսիրտոսին, որով կարծես ապահովում է հոր թագավորության շարունակվելը և հիմք պատրաստում իր ապագա որդու գահակալման համար¹⁰:

Այսպիսով, հաշվի առնելով նաև անունների՝ հնդեվրոպական համատեքստում համադրելիության հնարավորությունը, Այետեսի և Մեդեայի կեր-

⁹ Այդ կարգի մասին տե՛ս Гиоргадзе 1969:

¹⁰ Ի միջի այլոց, իռլանդական առասպելում հիշատակություն կա նաև ոսկե գեղմի համապատասխանության՝ եղջերուի ոսկե մորթու մասին. այդ կախարդական եղջերուի որսորդը դառնում է արքա: Պելոպսի որդիների հունական առասպելում ոսկե գեղմով ոչխարի հնարավոր համապատասխանությունը այդ եղջերուի հետ, և առհասարակ գեղմի՝ որպես իշխանության խորհրդանիշի հնարավոր հնդեվրոպական պատկերացման վերաբերյալ տե՛ս Krappe 1942, հմմտ. Lordkipanidze 2001, 3-4:

պարները համեմատելի են Դյումեզիլի քննած հնդկական և իռլանդական առասպելների հերոսների հետ (Յայատի և Մադհավի, Էդիսայդ և Մեդր): Եղել են հունական հիմքի վրա Մեդեայի անվան բացատրության փորձեր հնդեվրոպական *med- արմատից (հմմտ. հուն. μέδομαι «չափել, մտածել, բուժել»)¹¹: Սակայն հնարավոր է, որ ոչ հունական Մեդեա անունը, համահունչ հունական հիմքերի ազդեցությամբ իմաստափոխվելով, առաջացրել է համապատասխան առնչություններ (հմմտ. Յասոնի սկզբնական՝ Դիոմեդես և նրա ու Մեդեայի որդու Մեդուս/Մեդեյոս անունները, որոնք կերտված են թվում Մեդեայի անվան ազդեցությամբ): Բայց եթե Մեդեան կապված է Մադհավիի և Մեդրի հետ, այն պետք է ունենա այլ բացատրություն: Այս երկու անունների ստուգաբանությունն ակնհայտ է՝ կապված հնդեվրոպական *medhu - «արբեցնող (մեդրային) ըմպելիք» արմատի հետ¹², ինչը միանգամայն ընդունելի է նաև Մեդեայի համար, որն օգտագործում էր կախարդական բույսեր՝ քնեցնելով և թունավորելով հակառակորդներին (վիշապին և Գլավկեին. արբեցնող խմիչքից թունավոր թուրմերին անցումը կարելի է բացատրել հունական ավանդության մեջ կախարդուհու կերպարի զարգացմամբ): Mēdeia և Mādhai անուններում համընկնում են առաջին ձայնավորի երկարությունը և շեշտը (հնդեվրոպական e-ն հնդկերենում դառնում է a): Եվ եթե այդ անունները ծագում են նույն հնդեվրոպական նախածնից, ապա Մեդեան հունական անունն չէ. հունարենում *dh>θ (th), իսկ w/v-ի անկումը կարող էր տեղի ունենալ արդեն ուշ, հունական հողի վրա (*w>Ø անցումը բնորոշ է հունարենին): Ինչ ծագում կարող էր ունենալ այդ անունը: Ակնհայտ է՝ տեղական «այա-կոլխիդյան» (հնդեվրոպական լեզուների մեծամասնության մեջ, ինչպես հայերենում, *dh-ն դառնում է d և e-ն մնում է e):

Առասպելի անունները

Այետես անունը ավանդաբար իմաստավորվում է որպես Այա երկրանունից ածանցված՝ «Այա երկրի մարդ»՝ «Այայի բնակիչ» իմաստով, ընդ որում, Այան երբեմն մեկնաբանվում է ուղղակի որպես «երկիր»¹³: Իրոք, Այան համահունչ է անհայտ ստուգաբանությամբ հունական αἴα «երկիր» արմատին, բայց պարզ է, որ «երկիրը» չի կարող լինել օտարերկրյա տեղանուն¹⁴: Այետեսը արևի որդին է, և կա մեկնաբանություն, ըստ որի, Այան «արևածագի երկիրն» է՝ ստուգաբանորեն կապված հունարեն ἡώς «արևածագի» հետ¹⁵: Համաձայն այլ տարբերակի՝ Այայի կապը արևի հետ խեթական ժառանգու-

¹¹ DELG, 693, Гамкрелидзе, Иванов 1984, 811.

¹² Zimmer 1911, 196, Anm. 1, EWA II, 303, Mallory, Adams 1997, 313.

¹³ von Kamptz 1982, 146, Андреев 1990, 161.

¹⁴ Fowler 2013, 201.

¹⁵ IEW, 86, West 2007, 197.

թյուն է. Այան միջագետքյան աստվածուհու՝ արևի աստծու կնոջ անունն է, որին երկրպագում էին նաև խեթերը¹⁶ (նույն անունով դիցուհի է հիշվում նաև ուրարտական դիցարանում)¹⁷: Մյուս կողմից, ուշադրություն է դարձվել Այայի և էյա ծառի անունների «համընկնման» վրա¹⁸:

Այդ ստուգաբանությունը հանգամանորեն փաստարկել է Վ.Ն. Տոպորովը, ըստ որի՝ և՛ երկրի A¹α, և՛ նրա արքայի A¹իտդս անունները հանգում են սրբազան մշտադալար էյա ծառի անվանմանը, որը հանդես է գալիս որպես հավերժ կյանքի, անմահության խորհրդանիշ, քանի որ ծառանվան հնդեվրոպական *ei-/*oi- արմատը համադրելի է հավերժության և երիտասարդության (հավերժ երիտասարդության) հասկացությունը կոդավորող *eyu/* ayu-արմատի հետ¹⁹:

Ներկայումս այս բառերը հանգեցվում են տարբեր արմատների (համապատասխանաբար *h₁eyHweh₂ և *h₂eyu-)²⁰, բայց առասպելաբանության մեջ կարող են կապեր առաջացնել ոչ միայն նույնարմատ, այլ նաև տարբեր արմատներից ծագող նմանահունչ բառերը: Ինչևէ, հանդերձյալ աշխարհը, հատկապես դրա «դրական» (դրախտային) հատվածը, ինչպիսին Այա երկիրն էր, կարող է կոչվել ծառի անվամբ (հմմտ. հայ. դրախտ, իրանական «ծառ» նշանակությամբ բառից)²¹. Էյան ծառը՝ գեղծին (Taxus baccata), մշտադալար, բարձր, հազարամյակներ ապրող, մշակվող փայտանյութով, թունավոր տերևներով և պտուղներով ծառ է, որը կարևոր դեր ունի տարբեր ժողովուրդների՝ հատկապես անդրձիբիյան աշխարհի հետ կապված հավատալիքներում և ծեսերում: Մյուս կողմից, հեշտ է պատկերացնել Այա երկիրը՝ որպես հավերժական երիտասարդության երանելի անդրաշխարհ²²: Ըստ այդմ, Այետես անունը կարող է նշանակել էյա ծառով խորհրդանշվող հավերժ երիտասարդության «երանելի անդրաշխարհի բնակիչ»: Հատկանշական է, որ Էոխայդ անունը ևս, համաձայն մի ստուգաբանության, ծագում է նույն

¹⁶ West 1997, 407.

¹⁷ КУКН, 477.

¹⁸ Гамкрелидзе, Иванов 1984, 907, прим. 1.

¹⁹ Այդ ծառանունների համար (կերտված -wo-, -ko-, -o- ածականներով), հմմտ. հին հուն. οἷη «արուսի, սնծենի», լատ. uva «խաղող», հայ. այգի «խաղողի վազ», ռուս. ива «ուտենի», գալլ. i^{vo}, հին իռլանդ. eo, կիմր. ywen, հին բարձր գերմ. iwa, հին անգլ. iw, հին իսլանդ. yr, պրուս. iuwis «գեղծի, կենի» ևն: Հավերժության (հավերժ երիտասարդության) գաղափարի համար հմմտ. հին հնդ. ayu- «կենսատու», հուն. αἶών «դար», լատ. aevum «դար, հավերժություն», juvenis «երիտասարդ», գոթ. aiwus «ժամանակ, հավերժություն», ռուս. юный «պատանի» ևն), տե՛ս Топоров 2010, 296-298, հմմտ. HED I, 255-256: Էյա ծառանվան այս ստուգաբանությունը և դրա կապը *aiw-/ayu-«կենսատու» արմատի հետ առաջ է քաշվել Վ.Վ. Իվանովի կողմից (Иванов 1964, 1973, 298-302, տե՛ս նաև Friedrich 1970, 121-129):

²⁰ Տե՛ս օրինակ HEG I, 102-103, Kloekhorst 2008, 278:

²¹ ՀԱԲ I, 690-691:

²² «Դրախտային» հանդերձյալ կյանքի հնդեվրոպական պատկերացման մասին, որտեղ «չկա ծերություն», տե՛ս Lincoln 1991, 23-31:

«գեղծի» նշանակությամբ արմատից²³: Կելտական երանելի անդրաշխարհներից մեկը կոչվել է Tir na n-Og «պատանու երկիր», իսկ հանդերձյալ աշխարհի աստված Էնգուսի՝ Դագդա-Էոխայդի որդու անուններից մեկը եղել է Mac ind Oc «պատանու որդի», որտեղ «պատանի» եզրույթը ծագում է հիշյալ «կենսական ուժ, հավերժություն» արմատի տարբերակներից մեկից:

Յայատի անունը գիտական գրականության մեջ համարվում է անհայտ ծագում ունեցող, ուրիշ լեզվից փոխառված կամ կասկածով կապվում yat- «կարգավորվել, ջանալ» արմատի հետ²⁴: Բայց կարելի է հոգուտ Յայատիի՝ հնդեվրոպական *h₂eyu-ի հետ կապի փաստարկներ գտնել: Նախ, նա, կարելի է ասել, ապրում էր հավերժ երիտասարդ կյանքով, երկրորդ՝ Յայատիի պապն էր Այուն, որի անունը ծագում է նշված «պատանեկան կենսաուժ», «հավերժություն» արմատից (նա նաև կոչվել է «ամենաերիտասարդ», Ռիգ-վեդա. 53.10; MHM I, 146, հմմտ. Յայատիի հավերժ երիտասարդության մոտիվը): Հունարենը և հնդկերենը հնդեվրոպական համատեքստում իրար մոտ լեզուներ են: Aīetēs և Yayāti անունները նման են իրար, համապատասխանում են նաև շեշտը և երկրորդ վանկի երկարությունը: Ստուգաբանորեն Այետեսի հետ գրեթե ամբողջովին համընկնում է Յայատիի եղբոր՝ Այատիի անունը («Մահաբհարատա» I.70.29): Հայտնի է, որ առասպելաբանական եղբայրների անունները հաճախ ծագում են նույն նախատիպից: Սկզբնատառ y-ն Yayāti անվան մեջ կարող է բացատրվել արմատի մասնակի կրկնությամբ, անվան ուժեղացման ձգտմամբ: Ի դեպ, կրկնություն է հանդիպում նաև Այա երկրանվան դեպքում. «Ողիսականում» Այետեսի քրոջ՝ կախարդուհի Կիրկեի կղզին կոչվում է Αἰαία (Այայա, իսկ կախարդուհին ինքը՝ Αἰαίη Այայե), որն ակնհայտորեն Այա անվանման կրկնապատկումն է: Կիրկեի և նրա եղբոր հայրենիքը, իհարկե, Այան է (հայտնի է, որ «Ողիսականը» փոխառել է արգոնավորողների ճանապարհորդության առասպելի տարրեր)²⁵: Այդ անունները ստուգաբանորեն կամ երկրորդային կերպով՝ մոտ հնչողության պատճառով («ժողովրդական ստուգաբանությամբ») կապվել են հավերժություն, կենսաուժ և ծիսական ծառ (գեղծի) նշանակող համահունչ արմատների հետ:

Ասվածի հիման վրա կարելի ենթադրել, որ բերված հնդկական, հունական և իռլանդական առասպելները ծագում են միևնույն՝ հնդեվրոպական հիմքից: Կարելի է նշել հունական և հնդկական առասպելների և դրանց

²³ Կա IVACATTOS անվան V դարի օգամական հին այբուբենով գրված արձանագրություն, որը մեկնաբանվում է որպես «գեղծի+պայքար» (McManus 1991, 102, 105, 177, n. 8), և համարվում է Էոխայդ անվան նախատիպը՝ «նա, ով կոչվում է կարմրածաղի հետ» նշանակությամբ, տե՛ս le Roux 1968, 393, n. 60, Dumézil 1972, 331, n. 1, հմմտ. MacNeill 1930, HED I, 56, Puhvel 1987, 262, որտեղ Էոխայդը կապվում է «ծի» իմաստով արմատի հետ, և Bergin 1932, 140-146, որում հերքվում է այդ ստուգաբանությունը և առհասարակ Էոխայդի կապն օգամական արձանագրության հետ:

²⁴ van Vezten 1938, 120, Kuiper 1991, 92, EWA II, 6, 402, 2003, 74, Лебедев 2021, 736-738.

²⁵ Fowler 2013, 201, գրականության ցանկով:

հերոսների անունների մերձավորությունը՝ կապված լեզուների մերձավոր ազգակցության հետ:

Պատմական համատեքստ

Արգոնավորդների ճանապարհորդության պատմությունը ծագում է առասպելից և պետք է առաջին հերթին ուսումնասիրվի որպես առասպել: Բայց ակնհայտ է, որ դրանում առասպելական մոտիվներին զուգահեռ կա նաև պատմական շերտ²⁶: Առասպելը, վերածվելով էպոսի, ձեռք է բերում տարածաժամանակային առանձնահատկություններ և պատմականացվում է: Ինչ հարաբերություն կա առասպելի և պատմության մեջ: Եթե Յայատիի, Այետեսի, Էոխայդի և Նրանց դուստրերի առասպելները բխում են հնդեվրոպական մեկ հիմքից, ինչ կարելի է ասել Այա երկրի և իրական Կոլխիդայի նույնացման մասին:

Արգոնավորդների առասպելը և Կոլխիդային վերաբերող առասպելական փաստերը պատմական համատեքստում հանգամանորեն քննվել են հատկապես վրաց գիտնականների կողմից²⁷: Վրացական գիտության մեջ այդ առասպելը ներկայացվում է որպես Վրաստանի պատմության նախերգանք: Իրոք, կան վկայություններ Այա/Կոլխիդայի առասպելի պատմականության վերաբերյալ: Փասիանների (ցեղ, որ ապրում էր Կոլխիդայից ոչ հեռու, որի անունն է կրում հայկական Բասեն գավառը) արքան, ըստ Քսենոփոնի, եղել է Այետեսի հետնորդը: Ստրաբոնը գրում է, որ իր ժամանակ ցույց էին տալիս Այա քաղաքը Փասիս գետի ափին, և Այետես անունը տարածված էր տեղի բնակչության մեջ, իսկ համաձայն Ագաթիոս սխոլաստի՝ այդ անունն է ունեցել մի պատմական անձ մ. թ. VI դարի Լազիկայում (Քսենոփոն, *Anab.*, V.6.37; Ստրաբոն I.2.39; Ագաթիոս, *Hist.*, 89, 4-5)²⁸: Ոչխարի մորթու՝ սրբազան ծառի վրա տեղադրելու սովորույթը պահպանվել է արևմտաքարթվելական բնակչության մեջ մինչև ուշ ժամանակներ²⁹: Կոլխիդայի հյուսիսում ապրող սլանների մոտ հայտնի է եղել ոչխարի բրդի միջոցով ոսկու արդյունահանման մեթոդը, որը գեղմը հիրավի դարձնում էր «ոսկե» (Ստրաբոն XI.2.19; Ապիանոս, *Mithr.* 109)³⁰:

²⁶ Lordkipanidze 2001, 4-9.

²⁷ Խնդրի քննությունն իր ժամանակի գրականությամբ տե՛ս Доватур и др. 1982, 168-169, 177-178, Lordkipanidze 2001: Վրաստանում առասպելի չափից դուրս պատմականացման քննադատությունը տե՛ս Андреев 1990, 155-176:

²⁸ Հմմտ. Lordkipanidze 2001, 8, n. 8:

²⁹ Гамкрелидзе, Иванов 1984, 907, գրականությամբ:

³⁰ Меликишвили, Лордкипанидзе 1989, 460-461, прим. 206, Lordkipanidze 2001, 29, գրականության ցանկով: Ակնհայտ է՝ այս ոչ բոլոր տվյալներն ունեն ապացուցողական միևնույն ուժը: Առասպելի հնդեվրոպական բնույթն անհերքելի է՝ նրա առանցքային անուններն ու առասպելայինները՝ Այետես, Մեդեա, Այա, էյա ծառ, երանելի անդրաշխարհ և այլն, ինչպես տեսանք, հնդեվրոպական են՝ դրանց մի մասը այդ համատեքստում են քննվել ականավոր գիտնականների կողմից:

Հնագույն Կոլխիդայի կենտրոնը պետք է գտնվեր ներկա Կոլխիդայից հարավ՝ Ճորոխ գետի միջին հոսանքներում, և հենց Ճորոխն է, և ոչ Ռիոնը, որ հանդես է գալիս արգոնավորողների առասպելում Փասիս անունով: Կարծում են, որ Ռիոնի ավազանի հյուսիսկոլխիդական թագավորության նախորդը մինչև անտիկ ժամանակաշրջանը եղել է հարավկոլխիդական թագավորությունը Ճորոխի ավազանում, որն էլ հենց առասպելի Կոլխիդան է³¹: Կոլխ անվանումը առաջին անգամ հանդիպում է որպես Qulḫa (կարդալ՝ Կոլխա) մ.թ.ա. VIII դարում, ուրարտական Սարգուրի II արքայի արձանագրության մեջ³²: Իսկ առաջ՝ մ.թ.ա. VIII դարի առաջին կեսին, այդ շրջանում Ճորոխ գետի միջին և Եփրատի վերին հոսանքներում, Էրզրումից հյուսիս, ուրարտական աղբյուրները հիշում են Դիաուխի հզոր թագավորությունը, որը համապատասխանում է Քսենոփոնի հիշատակած տաոխների ցեղանվանը և հայկական Տայքին, հետագա վրացական աղբյուրներում հայտնի Տաո անվամբ³³ (սովորաբար նույնացվում է ասորեստանյան ավելի հին աղբյուրների Դայաենի երկրի հետ): Արգիշտի I-ից հետո Դիաուխի անունը վերանում է պատմությունից՝ մոտավորապես նույն տարածքներում մեկ անգամ հիշվում է Qulḫa-ն:

Հայկական և հայաստանյան կապեր

Ավելի վաղ՝ մ.թ.ա. XIV–XIII դդ., Դիաուխիի և մերձակա տարածքներում (Եփրատի վերին և Ճորոխի միջին հոսանքներ) խեթական աղբյուրները հիշատակում են Հայասա՝ սեպագիր Ḫayasa կոչվող թագավորությունը: Համաձայն հայ ժողովրդի ծագման վարկածներից մեկի՝ հայ ցեղանունը կապված է այդ երկրի հետ³⁴ (-sa վերջավորությունը համարվում է ածանց): Կա կարծիք, որ Ḫayasa անվան առաջին հնչյունը եղել է խ, որը կհակասեր վարկածին³⁵: Մենք, թեև լինելով հայերի ծագման մեկ այլ վարկածի հեղինակ, ցույց ենք տվել, որ Հայասայի տեղական հնչողությունը կարող էր լինել հ սկզբնահնչյունով, որը, սեպագրում չունենալով համապատասխան նշան, հա-

Չի բացառվում, որ անտիկ հեղինակները կարող էին Այետեսի անվան հետ նույնացնել մոտ հնչողություն ունեցող որևէ տեղական անուն, իսկ այն տեղեկությունը, որ այդ վայրերում իշխել է Այետեսի տոհմը՝ աշխարհի հունակենտրոն պատկերի այնպիսի մի արձագանք լինել, ինչպես և Ստրաբոնի հիշած Յասոնի դամբարանները Հայաստանում (XI.4.8; XI.14.12. Ստրաբոնն այդպիսին էր համարում տեղական որոշ սրբարաններ, տե՛ս Ադոնց 1972, 319):

³¹ Меликишвили 1959, 62–63, 1962, 324–325, Меликишвили, Лордкипанидзе 1989, 207, 219.

³² КУКН 241 C, D, TY, 118, տե՛ս նաև Меликишвили 1950, Меликишвили, Лордкипанидзе 1989, 205–208:

³³ Меликишвили 1950, TY, 70–71, Меликишвили, Лордкипанидзе 1989, 192–205.

³⁴ Հայասայի տեղայնացման մասին տե՛ս Քոսյան 2004, 48–50, հմմտ. Քոսյան 2013, Ղազարյան 2013, Պետրոսյան 2017, 72–82: Դիաուխի–Հայասա նույնացման և հայոց ազգածագման հայասական վարկածի մասին՝ Պետրոսյան 2017, 78–82, 164–181, գրականությամբ:

³⁵ Дьяконов 1968, 211, 212, վերջին աշխատություններից տե՛ս Kitazumi 2013, Simon 2013, 127:

ղորդվել է որպես *h*, այսինքն՝ *ju*³⁶: Արդեն վաղուց Այա երկիրը համադրվել է պատմական Հայասայի հետ³⁷: Սկզբնահնչյուն *h*-ի հարցը բացատրելի է, նշանակում է՝ այդ գաղափարի դեմ չկա լուրջ հակափաստարկ³⁸: Արգոնավորդների առասպելը ժամանակագրվում է տրոյական պատերազմի հերոսներից առաջ (մ.թ.ա. XIII դար): Նշանակում է՝ Հայասան համապատասխանում է Այա երկրին ոչ միայն անվանումով և տեղայնացմամբ, այլև գոյության ժամանակաշրջանով (XIV-XIII դդ.), այսինքն՝ ակնհայտ է, որ առասպելական Այան պետք է նույնացվի Հայասայի հետ, որի հնչողությունը, այսպիսով, եղել է *h*-ով և ոչ *ju*-ով³⁹: Արդեն Ստրաբոնը (I.2.39) գրում է, որ Կոլխիդայի հարստությունը մետաղներով՝ ոսկու, արծաթի, երկաթի և պղնձի հանքերով, ներշնչում է այն միտքը, որ հենց դա է եղել արգոնավորդների արշավի իրական պատճառը: Արգոնավորդների առասպելում ակնհայտ է «մետաղական կողը»: արգոնավորդները նավում են ոսկե գեղմի հետևից, մի էպիտաֆիայում Այետեսը անվանված է «ոսկեշատ Կոլխիդայի տիրակալ», Այետեսի մի դստեր *Χαλκίοπη* անունը նշանակում է «Պղնձաջք»⁴⁰: Նշանակալից է, որ ուրարտական արքաներ Մենուան և Արգիշտին ավար են վերցնում Դիաուխից ոսկի, արծաթ և պղինձ (KYKH 53, 16; 174 B 1, 24), որով այդ երկիրը տարբերվում է տարածաշրջանի մյուս երկրներից: Եվ ուրարտական արքաների արշավանքները Դիաուխի նպատակ ունեին գրավել մետաղներով հարուստ այդ շրջանը: Առհասարակ, Փոքր Ասիայի հյուսիսարևելյան շրջանները՝ Տրապիզոնից մինչև Ճորոխ գետի ավազան հայտնի են եղել իրենց ոսկով և այլ մետաղներով՝ սկսած ամենավաղ ժամանակներից⁴¹: Ի դեպ, բուն՝ «հյուսիսային» Կոլխիդայում (Ռիոն գետի ավազանում, այլ կերպ՝ Էգրիսի, Լազիկա) չկա և չի եղել ոսկի: Ոսկի կա և եղել է արևմտյան Վրաստանի հյուսիսում՝ Ռիոնի վերին հոսանքի և նրա հյուսիսային վտակների ավազանում⁴²: Ապա պարզվում է, որ ոչխարի գեղմով ոսկու արդյունահանման մեթոդը հայտնի է եղել ոչ միայն

³⁶ Петросян 2009, 92-93, Պետրոսյան 2017, 173-174, տե՛ս նաև Martirosyan 2010, 383-385:

³⁷ Hüsing 1933, 51, Меликишвили 1954, 85, Toumanoff 1963, 57-58, Ջահուկյան 1987, 285, Պետրոսյան 1997, 93-94, 2017, 174-176:

³⁸ Ի դեպ, Ի.Մ. Դյակոնովը, Հայասա>hay վարկածի ամենաակտիվ հակառակորդը, այն կարծիքին էր, որ հայ ցեղանունը ծագում է խեթական *Ḫatti*-ից (Дьяконов 1968, 238-239, прим. 119), որը որն ավելի քիչ հավանական է, քանի որ այդ անվան մեջ *h*-ն հնչում էր *ju* (հմմտ. եգիպտ. *ḫt*, ուգարիտ. *ḫt/ḫtj*, եբր. *ḫitt*, հուն. *Χετταῖος*, տե՛ս HEG I, 223), որը մատնում է նրա կանխակալությունը հայասական վարկածի նկատմամբ (տե՛ս van Loon 1987, 231, Петросян 2009, 83, Պետրոսյան 2017, 156):

³⁹ Ի միջի այլոց, Այայի նշված ստուգաբանություններից մեկի համաձայն, որը մեկնաբանում է այն որպես «արևածագի երկիր», այդ անվանումը հնում հնչել է *haya* (*h₂eussih₂>awhya>hawya>hayya>haya>aya*, տե՛ս West 2007, 197):

⁴⁰ Лордкипанидзе 1981, Меликишвили, Лордкипанидзе 1989, 460-461, прим. 206, Պետրոսյան 1997, 93-94:

⁴¹ Адонц 1908, 25-26, Меликишвили, Лордкипанидзе 1989, 201, Հմայակյան 2007, 155-158, Բոբոխյան, Գևորգյան 2015, 246, գրականությամբ:

⁴² Տե՛ս քարտեզը Lordkipanidze 2001, 27, Բոբոխյան, Գևորգյան 2015, 245-246:

Վրաստանի հյուսիսում, այլև Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում, ընդ որում՝ ընդհուպ XX դար⁴³: Այս մեթոդը այլ վաղ մշակութային իրողությունների պես կարող էր անցնել Վրաստան փոքրասիական տարածքներից:

Պղնձի և երկաթի մետաղագործությունը հավանաբար սկզբնավորվել է փոքրասիական և մերձսևծովյան շրջաններում, ներառյալ Հայկական լեռնաշխարհը: Կապ է ենթադրվել մի կողմից Հայաստայի և հնդեվրոպական *h₂ayes/*h₂ayos «մետաղ, պղինձ, երկաթ» արմատի⁴⁴, իսկ մյուսից՝ Կոլխիդայի (Κολχίς) և բալթիկ ու սլավոնական լեզուներում «երկաթ» նշանակող բառերի համար⁴⁵: Հենց այստեղ՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան տարածքներում են հիշատակվում «երկաթագործ» խալիբները: Նույն տարածքներում անտիկ աղբյուրները հիշում են արմենոխալիբներին, այսինքն՝ խալիբներն ապրել են հայկական շրջապատում: Իսկ վերջին տվյալներով, Վրաստանի սևծովյան շրջանում երկաթի մշակությունը ի հայտ է գալիս շատ ավելի ուշ՝ մ.թ.ա. V դարից⁴⁶ (Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում՝ մ.թ.ա. XII դարից): Ընդ որում, հնարավոր է, որ ոչ թե այդ երկրներն են կոչվել «մետաղ» նշանակող արմատներից, այլ ընդհակառակը, մետաղներն են կոչվել այդ երկրների անուններով⁴⁷: Այսպիսով, կարելի է պնդել, որ հունական Այան իրական Հայաստայի առասպելականացած հիշողությունն է⁴⁸:

Այս/Հայասա երկրանունը թերևս հասել է նաև հետագա ժամանակներ: Ուրարտական արձանագրություններում հիշատակվում է Iyani երկիրը (ուրարտական ուղղագրության համաձայն՝ գրվում է նաև Iganı, որտեղ -ni-ն ուրարտական ածանց է), որը տեղայնացվում է նույն տարածքներում՝ Ծովակ (թուրք. Չվդըր) լճի շրջանում⁴⁹: Այդ ցեղատեղանունը, կարելի է ասել, համընկնում է Այայի հետ՝ ուրարտ. է-ն և ի-ն՝ հաճախ համապատասխանում են հայ.ա-ին⁵⁰: Այդ երկիրը կարող էր լինել երբեմնի հզոր Հայաստայի արևելյան մի հատվածը, որը պահպանել էր նրա անվանումը (այդ դեպքում պետք է ենթադրել, որ սկզբնահունչ h-ն ուրարտ. սեպագրում, ինչպես և որոշ այլ դեպքերում չի արտահայտվել): Հետաքրքիր է, որ Հայկական լեռնաշխարհի հյու-

⁴³ Scott 1927. հետաքրքիր է, որ հեղինակն առաջին անգամ նկարագրում է ոսկու ստացման մեթոդը ոսկեբեր ջրերում ոսկեգոծված գեղմն այրելու ճանապարհով, որը Վրաստանից հայտնի չէ:

⁴⁴ Djahukian 1961, 388-389, Джаукян 1964, 67, տե՛ս նաև Պետրոսյան 1997, 93-94, Martirosyan 2010, 384:

⁴⁵ Иванов 1983, 98.

⁴⁶ Erb-Satullo et al. 2020.

⁴⁷ Лебедев 2021, 738-739, գրականությամբ:

⁴⁸ Ի միջի այլոց, Այա-Կոլխիդայի և Դիաուփիի նույնացումը Հայաստային բավական մշակված է նաև վրացական գիտության մեջ, միայն այնտեղ այդ հին երկրները դիտվում են Վրաստանի պատմության համատեքստում, տե՛ս Gordezian 2019, գրականությամբ:

⁴⁹ TY, 84-85, 87.

⁵⁰ Հմմտ. ուրարտ. ewri «պարոն», հայ. արի-որդ «օրիորդ, տիկին», ուրարտ. Uelikuni, հայկ. Getak'unı, և այլն, ինչպես նաև հայկական և սեպագիր անվանումների համընկումներում a-ի և e-ի համապատասխանության այլ դեպքերը, օրինակ՝ սեպագիր Enzite, հայ. Անձիտ և այլն:

սիս-կենտրոնական շրջանները միավորող էթնոնի հսկայական ցեղային միավորման արքա *Disini*-ն (Դիուծինի) կոչվում է *Iganiehi*՝ «իգանիացի»⁵¹: Դա կարող է նշանակել, որ Իյանի/Իգանին նշանակալի դեր է խաղացել տարածաշրջանում: Մյուս կարևոր պահը՝ այդ անունը անվիճելիորեն հայկական է, կազմված դի/դից «աստված» և ծին արմատներից, ստուգաբանական համապատասխանությունը հուն. *Θιογενεις* «աստծու տոհմից, աստծուց ծնված» անվան (այս կառուցվածքով առավել հայտնի անունն է հուն. *Διογένης/Γήογενής*)⁵²:

Հայաստանի կապը արգոնավորդների առասպելի հետ հանդես է գալիս հայերի ազգաձագման հունական լեգենդում, որի համաձայն՝ Արմենոսը՝ հայերի նախնին, եղել է արգոնավորդներից մեկը: Նրա ուղեկիցները հաստատվել են «Ակիլիսենում և Սիսալիրիտիսում մինչև Կալաքենե և Ադիաբենե» (Ստրաբոն XI.4.8; XI.14.12)⁵³: Ակիլիսենեն՝ հայոց Եկեղյաց գավառն է, որը հնում ընդգրկում էր ողջ Բարձր Հայք նահանգը, իսկ Սիսալիրիտիսը Սպերն է՝ Եկեղյացի հյուսիս-արևելյան շրջանը: Խեթական դարաշրջանում Եկեղյաց/Ակիլիսենեն եղել է Հայասայի կենտրոնը, որը, հայերի ծագման մասին հունական լեգենդի տրամաբանությամբ, պետք է լիներ հայերի նախնական հայրենիքը, որտեղից նրանք սփռվել են Հայկական լեռնաշխարհի մյուս մասերը (այս լեգենդը կարող է դիտվել որպես հայասական վարկածի ուժեղ փաստարկներից մեկը)⁵⁴:

Արգոնավորդների առասպելից հայտնի կոլիսիդացիների անունների քարթվելական մեկնաբանության փորձերն⁵⁵ անհամոզիչ են և թույլ հենց քարթվելական լեզվաբանության դիտանկյունից (այնպես, ինչպես և նրանց սեմական մեկնաբանությունը)⁵⁶: Այդ անունները համեմատում են ուշ վրացական և հինարևելյան անունների հետ, առանց քարթվելական արմատների հետ համադրման. հիշատակվում է նաև, օրինակ, հունական առասպելից հայտնի, ակնհայտորեն ոչ վրացական Մեդեա անվան և նրա տարբերակների տարածվածությունը Վրաստանում (ինչը հետևանք է արգոնավորդների առասպելի՝ որպես Վրաստանի պատմության նախերգանք ընկալման): Արևմտաքարթվելական էթնիկական տարրի ներկայությունը տարածաշրջան-

⁵¹ КΥΚΗ 241 С.

⁵² Պետրոսյան 2017, 131, 176-177:

⁵³ Հայոց ազգաձագման հունական առասպելի քննությունը տե՛ս Պետրոսյան 2017, 58-62:

⁵⁴ Պետրոսյան 2017, 172-175: Սրանից հետևում է Այետես արքայի՝ Այա երկրի առասպելական արքայի կերպարի տեսական համադրելիությունը Հայասայի գլխավոր աստծուն, որը հայտնի է գաղափարագիր գրությամբ՝ Ս.GUR: Դա անդրաշխարհի միջազգեության աստված Ներգալի գաղափարագրերից մեկն է (հմմտ. Այետեսի անդրաշխարհիկ գործառույթը): Հայասական Ս.GUR-ը և Այայի Այետեսը, մյուս կողմից, տեսականորեն կարող են համադրվել հայերի առասպելական նախահոր, հնում՝ գլխավոր աստծո՝ Հայկի հետ (տե՛ս Պետրոսյան 2015ա, 2018ա):

⁵⁵ Гордезиани 1972, 184-186, 1978, 207-210.

⁵⁶ Astour 1967, 293 հուն.:

նում՝ սկսած բավական հին ժամանակներից (բայց ոչ մ.թ.ա. երկրորդ հազարամյակից), անվիճելի է, այնպես, ինչպես և արգոնավորողների առասպելի անունների հնդեվրոպական և հունական ստուգաբանությունները, և անկանխակալ հետազոտողի համար նմանատիպ փաստարկներն անընդունելի են:

Իսկ երանելի անդրաշխարհի տեղայնացումը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում արդյո՞ք կապված է միայն առասպելական Այայի և Հայասայի պատահական նմանության հետ: Չէ՞ որ Եդեմը, այսինքն՝ դրախտը, աստվածաշնչյան երանելի անդրաշխարհը և մարդու արարման վայրը ևս տեղայնացվում է նույն շրջանում՝ Տիգրիսի և Եփրատի ակունքներում (նաև երկու այլ գետերի, որոնք միանշանակ չեն նույնացվում): Համաձայն արևմտասեմական՝ ուգարիտա-քանանական մի առասպելի, մեզ հասած ուշխեթական աղբյուրում, ամպրոպի Բաալ աստվածը գնում է իր հոր՝ Էլկունիրսա «երկրի արարիչ աստծու» մոտ, որն ապրում էր Եփրատի ակունքներում⁵⁷: Դրախտը, երանելի անդրաշխարհը առասպելաբանական պատկերացումներում կարող է տեղայնացվել արարչագործության առասպելի տեղայնացման վայրում՝ աշխարհի կենտրոնում, այնտեղ, որտեղից են սկիզբ առնում գոյություն ունեցող բոլոր երևույթներն ու իրադարձությունները: Հայասայի անվանաբանության մեջ բացահայտվում են խաթական, անատոլիական, հայկական, բալկանյան, խուռաուրարտական և հնդիրանական լեզվական տարրեր⁵⁸: Այդ տարածքները եղել են, հավանաբար, հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական՝ սեմական, խաթական, խուռիական, քարթվելական և հյուսիսկովկասյան ցեղերի շփումների վայր, և նրանցից ոմանք կարող էին հենց այդտեղ տեղայնացնել իրենց երանելի անդրաշխարհը⁵⁹:

Գրականություն

Արդնց Ն. 1972, Հայաստանի պատմություն, Երևան, «Հայաստան», 430 էջ:

Բոբոլյան Ա., Գևորգյան Ա. 2015, Ոսկե գեղմ-վիշապաքար. առասպելից դեպի հնագիտություն, Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 241-257:

ՀԱՐ Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, Ա-Դ, Երևան, Համալսարանի հրատ., 1971-1979:

Հմայակյան Ս. 2007, Ուրարտուի ոսկին, Հին Հայաստանի ոսկին, Երևան, «Գիտություն», էջ 151-185:

Ղազարյան Ռ. 2013, Տուրուբերանում Հայասայի տեղորոշման հարցի շուրջ, Հայկագունիներ, «Գիտություն», էջ 113-117:

Պետրոսյան Ա. 1997, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը, Երևան, «Վան Արյան», 208 էջ:

⁵⁷ Տե՛ս օրինակ Hoffner 1990, 69, առասպելի քննությունը՝ Պետրոսյան 2006ա, 33-34:

⁵⁸ Джаукян 1964, 1988, Petrosyan 2002, 173-174, Պետրոսյան 2015, Martirosyan 2010, 384-385:

⁵⁹ Պետրոսյան 2006, 99-100:

- Պետրոսյան Ա. 2006, Արամազդ. պաշտամունք, կերպար, նախատիպեր, Երևան, «Վան Արյան», 116 էջ:
- Պետրոսյան Ա. 2015, Հայաստանի դիցարանի էթնիկական հիմքերը, Էջմիածին, 11, էջ 78-98:
- Պետրոսյան Ա. 2017, Հայ ժողովրդի ծագման խնդիրը, Երևան, «Անտարես», 256 էջ:
- Պետրոսյան Ա. 2018, Հայ ժողովրդական հերոսական էպոսը, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում XVII, Երևան, ՀԱԻ, էջ 414-425:
- Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, ԳԱ հրատ., 648 էջ:
- Քոսյան Ա. 2004, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խերական սեպագիր աղբյուրների), Երևան, «Հանգակ 97», 166 էջ:
- Քոսյան Ա. 2013, Վանից մինչև Եփրատ (հայոց վաղ պետականության ակունքներում), Հայկազունիներ, Երևան, «Գիտություն», էջ 48-63:
- Андреев Ю.В. 1990, Поэзия мифа и проза истории, Ленинград, «Лениздат», 223 с.
- Адонц Н.Г. 1908, Армения в эпоху Юстиниана, СПб., Академия наук, 526 с.
- Ардзинба В.Г. 1982, Ритуалы и мифы древней Анатолии, Москва, «Наука», 252 с.
- Гамкрелидзе Т.В., Иванов В.В. 1984, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, Тбилисский университет, 1330 с.
- Гиоргадзе Г.Г. 1969, О престолонаследии в древнехеттском царстве (к интерпретации §28 «Указа Телипину»), Вестник древней истории, N 4, с. 67-83.
- Гордезиани Р.В. 1972, Айа в древнейших греческих источниках, Античность и современность, Москва, «Наука», с. 178-186.
- Гордезиани Р.В. 1978, Проблемы гомеровского эпоса, Тбилиси, Тбилисский университет, 394 с.
- Грейвс Р. 1992, Мифы древней Греции, Москва, «Прогресс», 620 с.
- Джаукян Г.Б. 1964, Хайасский язык и его отношение к индо-европейским языкам, Ереван, Академия наук, 96 с.
- Джаукян Г.Б. 1988, О соотношении хайасского и армянского языков, Историко-филологический журнал, N 1, с. 60-79, N 2, с. 68-88.
- Доватур А.И., Каллиостов Д.П., Шишова И.А. 1982, Народы нашей страны в «Истории» Геродота, Москва, «Наука», 456 с.
- Дьяконов И.М. 1968, Предыстория армянского народа, Ереван, Академия наук, 264 с.
- КУКН Арутюнян Н.В. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван, «Гитутюн», 542 с.
- Иванов В.В. 1964, Разыскания в области анатолийского языкознания, Проблемы индоевропейского языкознания, Москва, «Наука», с. 40-44.
- Иванов В.В. 1983, История славянских и балканских названий металлов, Москва, «Наука», 197 с.
- Иванов В.В., Топоров В.Н. 1974, Исследования в области славянских древностей, Москва, «Наука», 342 с.
- Лебедев А.В. 2021, Индоарийские имена в саге об аргонавтах, ономастике Колхиды и надписях Северного причерноморья, Индоевропейское языкознание и классическая филология-XXV, с. 728-782.
- Лордкипанидзе О.Д. 1981, Колхида златообильная (миф и археология), Древний Восток и мировая культура, Москва, «Наука», с. 59-62.
- Меликишвили Г.А. 1950, Диаухи, Вестник древней истории, N 4, с. 26-42.
- Меликишвили Г.А. 1954, Наири-Урарту, Тбилиси, Академия наук, 446 с.
- Меликишвили Г.А. 1959, К истории древней Грузии, Тбилиси, Академия наук, 507 с.
- Меликишвили Г.А. 1962, Кулха, Древний мир, Москва, изд. Восточной литературы, с. 280-321.

- Меликишвили Г.А., Лордкипанидзе О.Д. (ред.) 1989, Очерки истории Грузии, т. 1, Тбилиси, Мецниереба, 510 с.
- МНМ Мифы народов мира, т. I-II, М., Советская энциклопедия, 1980-1982.
- Петросян А.Е. 2009, О происхождении армянского народа: проблема идентификации протоармян (критический обзор), Армянский вестник 2/3-1, с. 66-102.
- Топоров В.Н. 2010, Образ мирового дерева у Аполлония Родосского в мифо-ритуальном контексте, Древо мировое, т. 2, Москва, Рукописные памятники Древней Руси, с. 293-317.
- ТУ Арутюнян Н.В. 1985, Топонимика Урарту, Ереван, Академия наук, 308 с.
- Astour M. 1967, *Hellenosemitica*, Leiden, Brill, 415 p.
- Bergin O. 1932, *Varia II*, Ériu, 11, p. 136-149.
- Bremmer J.N. 2008, *Greek Religion and Culture, The Bible and the Ancient Near East*, Leiden, Boston, Brill, 424 p.
- DELG Chantraine P. *Dictionnaire étymologique de la langue grecque*, I-IV, Paris, Klincksiek, 1968-80.
- Djahukian G.B. 1961, The Hayasa Language and Its Relation to the Indo-European Languages, *Archiv Orientalni* 29/3, p. 353-405.
- Dumézil G. 1972, *Mythe et épopée II*, Paris, Gallimard, 410 p.
- EWA II Mayrhofer M. 1996, *Etymologisches Wörterbuch des Altindoarischen*, II, Heiderberg, Winter, 896 S.
- Erb-Satullo N., Gilmour J.J., Khakhutaishvili N. 2020, The Metal behind the Myths: Iron Metallurgy in the South-Eastern Black Sea Region, *Antiquity*, 1019, p. 401-420.
- Fontenrose J. 1959, *Pithon: A Study of Delphic Myth and Its Origins*, Berkeley, Los Angeles, University of California Press, 616 p.
- Fowler R.L. 2013, *Early Greek Mythography, Vol. II: Commentary*, Oxford, Oxford University Press, 825 p.
- Friedrich P. 1970, *Proto-Indo-European Trees: the Arboreal System of a Prehistoric People*, Chicago, London, University of Chicago Press, 204 p.
- Gordeziani L. 2019, Some Remarks on Qulḫa, Over the Mountains and Far Away: Studies in Near Eastern History and Archaeology presented to Mirjo Salvini in the Occasion of his 80th Birthday, Oxford, Archaeopress, p. 241-243.
- HED I Puhvel J. 1984, *Hittite Etymological Dictionary: Trends in Linguistics*, Berlin, New York, Winter, 504 p.
- HEG I Tischler J. 1983, *Hethitisches etymologisches Glossar*, I-III, Innsbruck, Institut für Sprachwissenschaft der Universität Innsbruck, 334 S.
- Hoffner H.A. 1990, *Hittite Myths*, Atlanta, Scholars Press, 121 p.
- Hüsing G. 1933, *Die Völker Altkleinasiens und am Pontos*, Wien.
- IEW Pokorny J. 1959, *Indogermanisches etymologisches Wörterbuch I*, Bern, München, A. Francke, 770 S.
- Kitazumi T. 2013, Zum Problem der Gleichung heth. ḫayaša- = armen. hayk ‘, *Zertschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft*, 163/2, p. 511-517.
- Kloekhorst A. 2008, *Etymological Dictionary of the Hittite Inherited Lexicon*, Leiden, Boston, Brill, 1162 p.
- Krappe A.H. 1942, The Sovereignty of Erin, *American Journal of Philology*, 63, p. 444-454.
- Kuiper F.B.G. 1991, *Aryans in the Rigveda*, Amsterdam, Atlanta, Rodopi, 116 S.
- Lincoln B. 1991, *Death, War, and Sacrifice*, Chicago, London University of Chicago Press, 312 p.
- Lordkipanidze O.D. 2001, The Golden Fleece: Myth, Euhemeristic Explanation and Archaeology, *Oxford Journal of Archaeology* 20, p. 1-38.
- MacNeill F. 1930, The Mythology of Lough Neagh, *Béaloideas* 2, p.115-121.
- McManus D. 1991, A Guide to Ogam, Maynooth, An Sagart, 211 p.

- Mallory J.P., Adams D.Q. 1997, *Encyclopedia of Indo-European Culture*, London, Fitzroy Dearborn Publishers, 829 p.
- Martirosyan H.K. 2010, *Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon*, Leiden, Boston, Brill, 998 p.
- Moreau A. 1994, *Le mythe de Jason et Medee*, Paris, Le belles lettres, 344 p.
- Zimmer H. 1911, *Der kulturgeschichtliche Hintergrund in den Erzählungen der alten irischen Heldensage*, *Sitzungsberichte der Preussischen Akademie der Wissenschaften, Philosophisch-Historische Klasse*, S. 174-227.
- Petrosyan A.Y. 2002, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, Washington DC, Institute for the Study of Man, 236 p.
- Puhvel J. 1987, *Comparative Mythology*, Baltimore, London, John Hopkins University Press, 302 p.
- Scott J.A. 1927, *The Origin of the Myth of the Golden Fleece*, *The Classical Journal* 22/7, p. 541.
- Simon Z. 2013, *Die These der hethitisch-luwischen Lehnwörter im Armenischen: eine kritische Neubetrachtung*, *International Journal of Diachronic Linguistics and Linguistic Reconstruction* 10, p. 97-135.
- Toumanoff C. 1963, *Studies in Christian Caucasian History*, Washington D.C., Georgetown University Press, 601 p.
- von Kamptz H. 1982, *Homerische Personennamen, Sprachwissenschaftliche und historische Klassifikation*, Göttingen, Vandenhoeck, Ruprecht, 388 S.
- van Loon M. 1987, *Review of: I.M. Diakonoff, The Pre-History of the Armenian People*, *Bibliotheca Orientalis* XLIV 3/4, p. 230-233.
- van Vethzen J.A. 1938, *Names of Persons in Early Sanskrit Literature*, Utrecht, Utr. typ. ass.
- West M. L. 1997, *The East Face of Helicon*, Oxford, Clarendon Press, 678 p.
- West M.L. 2007, *Indo-European Poetry and Myth*, New York, Oxford University Press, 525 p.
- le Roux F. 1968, *La mythologie irlandaise du Livre des conquêtes*, *Ogam* 20, p. 381-404.

ԱՐԳՈՆԱՎՈՐԴՆԵՐ. ՀՆԴԵՎՈՊԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Արմեն Պետրոսյան

Ամփոփում

Այս առասպելում Այետես արքայի և նրա դուստր Մեդեայի կերպարները և անունները համեմատելի են հնդկական Յայատիի և նրա դուստր Մադհավիի և իռլանդական Էոխայդիի և նրա դուստր Մեդբի առասպելների հետ, որոնք հնդեվրոպական համատեքստում մանրամասն ուսումնասիրել է Ժորժ Դյումենզիլը: Այան՝ այն երկիրը, որտեղ նավարկում են արգոնավորդները, ակնհայտորեն առասպելական՝ կախարդական մի թագավորություն է, երանելի անդրաշխարհ, որը միայն հետազայում է նույնացվել Կոլխիդայի հետ: Հնագույն Կոլխիդան գտնվում էր հետագա Կոլխիդայի հարավ-արևմուտքում, այն տարածքներում, որտեղ մ.թ.ա. XIV-XIII դդ. եղել է խեթական աղբյուրների Հայաստայի թագավորությունը: Այսինքն՝ առասպելական Այան նույնացվել է պատմական Հայաստայի հետ:

Բանալի բառեր՝ հնդեվրոպական դիցաբանություն, հայոց նախապատմություն, արգոնավորդների առասպել, Այա, Կոլխիդա, Այետես, Մեդեա:

АРГОНАВТЫ: ИНДОЕВРОПЕЙСКИЙ МИФ КАК ИСТОЧНИК ПРЕДЫСТОРИИ АРМЕНИИ

Армен Петросян

Резюме

В этом мифе образы царя Ээта и его дочери Медеи сопоставимы с образами Яяти и его дочери Мадхави индийской и Эохаида и его дочери Медб ирландской мифологии, подробно изученной в индоевропейском контексте Жоржем Дюмезилем. Айа – страна, куда плывут аргонавты, очевидно, мифологическое волшебное царство, блаженный потусторонний мир, позже отождествляемый с Колхидой. Древнейшая Колхида располагалась на юго-западе позднейшей Колхиды, на территориях, где в XIV-XIII вв. до н.э. находилось царство Хайаса хеттских источников. Это дает основание считать, что мифическая Айа отождествлялась с исторической Хайасой.

Ключевые слова – индоевропейская мифология, предыстория Армении, миф об аргонавтах, Айа, Колхида, Ээт, Медея.

ARGONAUTS: INDO-EUROPEAN MYTH AS A SOURCE OF ARMENIAN PREHISTORY

Armen Petrosyan

Abstract

In the Greek myth on Argonauts the images of King Aeetes and his daughter Medea are comparable with the images of Yayati and his daughter Madhavi of Indian and Eochaid and his daughter Medb of Irish mythologies, studied in details in the context of Indo-European mythology by Georges Dumézil. Aia, the country where the Argonauts sail, is obviously a mythological magical kingdom, a blissful otherworld, later identified with Colchis. Ancient Colchis was located in the south-west of the later Colchis, in the territories, where in the 14th-13th centuries BC the kingdom of Hayasa of Hittite sources was located. This gives reason to believe that the mythical Aya was identified with the historical Hayasa.

Key words – Indo-European mythology, prehistory of Armenia, the Argonaut myth, Aia, Colchis, Ayetes, Medea.